



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմոնյան



«19» 11 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 246 - 24

Նախաձեռնող՝

«ԳԱՐ-ՇԻՆ» ՍՊԸ

Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, 2-րդ թղմ., 2.3, բն, 6

Գործունեությունը՝

Ջրառարի ավազակոպճագլաքարային խառնուրդի
հանքավայրի արդյունահանման աշխատանքներ
Արմավիրի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 246 - 24

« 19 » Մայիս 2024թ.

Ջրառատի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«ԳԱՐ-ՇԻՆ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն նախագծային փաստաթղթեր

/Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Երասխահուն բնակավայր

Ներածական մաս. Արմավիրի մարզի Ջրառատի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրը գտնվում է Երասխահուն բնակավայրի ամենամոտ շինությունից 610 մ, Ջրառատ գյուղից՝ 1.8 կմ, Էջմիածին քաղաքից 13 կմ, Արաքս գետից գտնվում է 1 կմ, իսկ Մեծամոր /Սևջուր/ գետից՝ 4,5 կմ հեռավորության վրա: Ուսումնասիրված տարածքը գտնվում է Արաքս և Երասխահուն գյուղերի միջև:

Հայցվող տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Երասխահուն բնակավայրի վարչական սահմանում և ներկայացված է Երասխահուն բնակավայրի՝ նպատակային նշանակությամբ գյուղատնտեսական, գործառնական նշանակությամբ այլ հողատեսքերով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ պաշարների պետական հանձնաժողովի կողմից 1970թ.-ի ապրիլի 23-ի №195 արձանագրությամբ որպես բալաստային հումք՝ հետևյալ քանակներով՝

A – 1052.9 հազ.մ³, B – 2032.8 հազ.մ³, C1 – 7462.8 հազ.մ³, միասին՝ 10548.5 հազ.մ³



բացահանքում մարվող պաշարները՝ 1 725.3 հազ. մ³,
տարեկան արտադրողականությունն ըստ մարվող պաշարների՝ 86265 մ³,
օգտակար հանածոյի կորզվող պաշարները՝ 1607100 մ³,
տարեկան արտադրողականությունն ըստ կորզվող պաշարների - 86265 մ³:
Բացահանքի ծառայման ժամկետը 20 տարի է:

Բացահանքի շահագործման ժամանակ օգտակար հանածոյի ընդհանուր բացահանքային կորուստները, մնում են բացահանքի կողերի շեպերի բնամասում: Բացահանքում դրանք կազմում են 111900 մ³ կամ 6.49%:

Օգտակար հանածոն հիմնատակող կավային ապարների աղտոտումից զերծ պահելու համար բացահանքի հատակում մոտ 10 սմ օգտակար հանածոյի շերտ է թողնվելու: Այդ կորուստները կկազմեն՝ 6300 մ³ կամ 0.36%:

Ընդամենը կորուստները հաշվարկված են՝ 118200 կամ 6.85%:

Նախատեսվում է մոտեցնող բնահողային ավտոճանապարհի կարգաբերում: Ավտոճանապարհի երկարությունը՝ միջինը 905 մ, ամենամեծ թեքությունը 0%, 8 մ լայնությամբ: Ավտոճանապարհի մակերեսն է՝ 7240 մ² (1090 մ³):

Աշխատանքային հրապարակի կարգաբերում՝ 570 մ² (90 մ³):

Արդյունաբերական հրապարակի կարգաբերում՝ 200 մ² (45 մ³):

Աշխատանքային հրապարակի լայնությունը 23.0 մ է:

Բացահանքի մակաբացման ապարները 15300 մ³ ծավալով տարածված են բացահանքի միայն հարավ, հարավ-արևելյան մասերում:

Բացահանքում մակաբացման ապարների հզորությունը տատանվում է 0.1-2.1 մ, միջինը՝ 0.34 մ:

Ծածկող ապարները ներկայացված են հողաբուսական շերտով խառնված ավազակավերով և կավահողով, որոնք ծածկում են ավազակոպճային զանգվածը բացահանքի արևելյան, հարավ արևելյան մասերում: Շահագործման 1-5-րդ տարիներին մակաբացման ապարները բույրոգերով կուտակվում են տվյալ տարում շահագործվող հանքաստիճանի աշխատանքային հրապարակի վրա, էքսկավատորով բարձրվելու են ավտոինքնաթափի մեջ և տեղափոխվելու են բացահանքի հարավ-արևելյան մասում ձևավորվող ներքին լցակույտ որի զբաղեցրած մակերեսը կազմելու է 1700 մ²: Տեղափոխման հեռավորությունը միջինում կազմելու է 0.5 կմ:

Ավազակոպճազլաքարային խառնուրդի արդյունահանման աշխատանքները կատարվելու են դեպի ներքև շերտի մասն եղանակով, 2.1 մ³ շերտի տարողությամբ հակառակ բահով սարքավորված էքսկավատորով:

Արդյունահանված ավազակոպճային խառնուրդի տեղափոխումը կատարվելու է սպառողի ավտոտրանսպորտի միջոցով:

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից՝ ընտրվել է ներքին լցակույտառաջացում:

Բացահանքի համար խմելու ջուրը նախատեսվում է բերել Երասխահուն բնակավայրից՝ համայնքապետարանի հետ կնքված պայմանագրային հիմունքներով:

Բացահանքի տեխնիկական և կենցաղային ջրամատակարարումը նախատեսվում է կատարել արդյունահանման արդյունքում բացահանքում գոյացող գրունտային ջրերի հաշվին՝ սահմանված կարգով ձեռք բերելով ջրօգտագործման թույլտվություն:

Կենցաղային կեղտաջրերը՝ օրական 0.13 մ³ ծավալով, նախատեսվում է լցնել բետոնային լցարան, որտեղից պարբերաբար տեղափոխել մոտակա մաքրման կայան:



Փոշենաստեցման մակերեսները կազմում են ավտոճանապարհը՝ 2900 մ², լցակույտը՝ առավելագույնը 1700 մ², արդյունաբերական հրապարակը՝ 200 մ², ընդհանուրը՝ 4800 մ²: Հանքախորշը չի նախատեսվում, քանի որ ջրերի կապիլյար բարձրացման հետևանքով հունամերձ ավազները նույնիսկ տարվա ամենաչոր ժամանակ (օգոստոսին) գտնվում են խոնավ վիճակում:

Նախատեսվում է բացահանքի շահագործման ավարտից հետո իրականացնել Լեռնատեխնիկական վերականգնում:

Հարթեցվելու է բացահանքի միայն արդյունաբերական հրապարակը՝ 200 մ² և ներքին լցակույտը՝ 1700 մ²: Հարթեցում իրականացվելու է ընդամենը 1900 մ² տարածքում, բուլդոզերի օգնությամբ:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա: Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կկազմի 561.8 հազ. ՀՀ դրամ, որից 95.0 հազ. ՀՀ դրամը կենսաբանական ռեկուլտիվացիայի համար:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Արդյունահանման աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:
 - Լեռնային տեխնիկայի շարժիչների վառուցքները պետք է լինեն կարգավորված, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը:
 - Լեռնային տեխնիկայի և ավտոինքնաթափերի շարժիչների գազերի արտանետման վրա տեղադրվելու են կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչը հնարավորություն կտա կրճատել գազերի արտանետումները մթնոլորտ:
 - Փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով՝ տարվա չոր և շոգ եղանակին իրականացվելու է մերձատար ճանապարհների ջրցան:
 - Նախքան լեռնակապիտալ աշխատանքների սկսելն իրականացվելու է հանքավայրի տարածքի մանրակրկիտ տեղազննում՝ կենդանիների և թռչունների բների հայտնաբերման նպատակով:
 - Բանեցված օդաճնշիչ դողերը նախատեսվում է հավաքել և իրացնել համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպություններում:
 - Ընկերության ավտոպարկի, (տեխնիկայի) վերալիցքավորման, յուղի փոխման կամ ընթացիկ այլ սպասարկման գործընթացները կատարվելու են համայնքի տարածքում գործող մասնագիտացված կազմակերպություններում:
 - Աշխատակիցներն ապահովվելու են աղմուկից պաշտպանվելու անհատական միջոցներով:
 - Հանքավայրի տարածքում աղմուկը կանոնակարգելու նպատակով, նախատեսվում է խուսափել աղմկահարույց լեռնատրանսպորտային սարքավորումների կիրառումից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տեղադրվելու են խլացուցիչներ:
 - Արտադրական հրապարակում ապահովվելու է հրդեհաշիջման համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների առկայությունը:
- Օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ



- հողային ծածկույթի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,
 - ստորգետնյա ջրերի մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ,
 - հանքի հարակից տարածքում վայրի բնության, կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,
 - աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ:
- Մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 450.0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Արմավիրի մարզի Ջրառատի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Երասխահուն բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Մեծամորի համայնքապետարանը և Արմավիրի մարզպետարանը:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և բնապահպանական միջոցառումների իրականացման արդյունքում կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

- Անհրաժեշտ է մինչև հանքարդյունահանման աշխատանքների սկսելը շրջակա միջավայրի նախարարությունից ստանալ ջրօգտագործման թույլտվություն:

- Բացահանքի շահագործման ընթացքում ներգրավել համայնքի բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել համայնքային բյուջե ֆինանսական ներդրումներն ու անհրաժեշտ սոցիալական ծրագրերը:

- Անհրաժեշտ է ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և



դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

-Արդյունահանվող տարածքներից հողային շերտի հեռացումը և դրա պահպանումը բացահանքի տարածքից անհրաժեշտ է կատարել՝ ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 8-ի №1396-Ն և Կառավարության 2017թ-ի նոյեմբերի 2-ի թիվ 1404-Ն որոշումների պահանջներին համապատասխան:

-Անհրաժեշտ է առաջնորդվել «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» 2005 թվականի հունվարի 20-ի N 64-Ն որոշման պահանջներով:

- Անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի № 71-Ն, № 72-Ն որոշումների և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի № 781-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ Կարմիր գրքերում գրանցված բույսերի և կենդանիների հանդիպելու դեպքում, ձեռնարկել դրանց պահպանության համար համապատասխան միջոցառումներ, բացառելով տեսակների թվաքանակի կրճատումը և դրանց ապրելավայրերի վատթարացումը: Միջոցառումները պետք է համաձայնեցվեն պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

-Անհրաժեշտ է իրականացնել փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին՝ օրվա ընթացքում պարբերաբար:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԳԱՐ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Ջրառատի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Հովիկ Մեսրոպյան